



1. Ընկերությունում վարկի տրամադրման համար գրավ են հանդիսանում միայն դեղին ոսկուց պատրաստված ոսկյա իրերը՝ ջարդոնի, զարդերի և այլ տեսքով, ինչպես նաև ոսկու ստանդարտացված ձուլակտորները:
2. Ոսկուց պատրաստված այն իրերը, որոնք ունեն Ընկերության կողմից հաստատված ոսկու գնահատման աղյուսակում նշված հարգերից ցածր հարգ, գնահատվում են տվյալ հարգին ամենամոտ ցածր հարգի գնով:
3. Ոսկուց պատրաստված այն իրերի համար, որոնց վրա հարգադրոշմը բացակայում է, գնահատումն իրականացվում է հարգորոշված հարգի՝ Ընկերության կողմից սահմանված գնի 80%-ի չափով:
4. Այն դեպքում, երբ ոսկյա իրը բաղկացած է տարբեր հարգերի ոսկուց, և
 - ոսկերիչը կարողանում է որոշել դրանց քաշը՝ ըստ հարգերի, ապա ոսկյա իրի գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր հարգի համար Ընկերության կողմից սահմանված արժեքով,
 - ոսկերիչը չի կարողանում որոշել դրանց քաշը՝ ըստ հարգերի, ապա ոսկյա իրի գնահատումն իրականացվում է հայտնաբերված հարգերից նվազագույնի համար Ընկերության կողմից սահմանված արժեքով,
 - այն դեպքում, երբ ոսկյա իրը պարունակում է և դեղին և սպիտակ ոսկուց պատրաստված մասեր, ապա, ոսկերիչը, հնարավորության դեպքում, որոշում է ոսկյա իրում առկա սպիտակ ոսկու մոտավոր քաշը և հանում այն ոսկյա իրի ընդհանուր քաշից, որից հետո իրականացնում է ոսկյա իրի գնահատումը, իսկ անհնարինության դեպքում՝ ոսկյա իրի դիմաց վարկավորում չի իրականացվում:
5. Վարկավորում չի իրականացվում՝
 - ոսկյա իրերի գեղարվեստական արժեքների և դրանց ամրացված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի դիմաց,
 - գնդիկաձև կամ սնամեջ (ստուգման համար անհասանելի) ոսկյա իրերի դիմաց,
 - բացառապես սպիտակ ոսկուց պատրաստված ոսկյա իրերի դիմաց: